



Հաստատված է

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի

խորհրդի

\_\_\_ նիստում

"\_24\_" .12.2018 թ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Հաստատված է

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի

խորհրդի

\_\_\_ նիստում

"\_24\_" .12.2018 թ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾԿԵՏՎՈՒԹՅՈՒՆ



Հաստատված է

Պատմության և իրավագիտության ֆակուլտետի

խորհրդի

\_\_\_ նիստում

"\_24\_" .12.2018 թ.

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՒ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՀԱԾՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2018

## I. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

<p>Ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում իր ռազմավարական պլանին համապատասխան:</p>
<p>Ֆակուլտետի ծավալած գործունեությունը հաշվետու ժամանակահատվածում ռազմավարական ծրագրին, դրա նպատակներին և խնդիրներին համապատասխան:</p> <p>Հաշվետու տարում պատմության և իրավագիտության ֆակուլտետի գործունեությունն իրականացվել է ֆակուլտետի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի գործողությունների կատարման պլանին համապատասխան:</p>
<p>Վերլուծել, թե ինչպես է ֆակուլտետը վերհանել ներքին և արտաքին շահակիցների կարիքները, պահանջները բացահայտող ինչ մեխանիզմներ է կիրառել:</p> <ul style="list-style-type: none"><li>• Ֆակուլտետի համապատասխան լսարանները վերազինվել են համապատասխան տեխնիկայով, որը հնարավորություն է ընձեռնում բոլոր մասնագիտությունների գծով ուսումնառող բոլոր կուրսերում կազմակերպել ինտերակտիվ ուսուցում:</li><li>• Ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների ներկայացուցիչների կողմից պարբերաբար կազմակերպվել են հանդիպումներ ուսանողության ներկայացուցիչների հետ և առանձին կուրսերում: Վեր են հանվել ուսանողներին հուզող մի շարք հարցեր՝ դասավանդման որակի, տեխնիկական խնդիրների և մի շարք բովանդակային հարցերի հետ կապված: Ֆակուլտետի ուսանողությունը իր ներկայացուցիչների՝ խորհրդի անդամ ուսանողների, միջոցով առկա կարիքների և խնդիրների մասին բարձրաձայնել է նաև ֆակուլտետի խորհրդի նիստերում:</li><li>• Ֆակուլտետի դեկանատի կողմից ուշադրության կենտրոնում է եղել նաև ուսանողների կողմից google classroom հարթակում բարձրացված խնդիրները:</li><li>• Հաշվետու տարվա ընթացքում սահմանված աշխատանքային պլանի համաձայն կազմակերպվել են ֆակուլտետի խորհրդի նիստեր, նիշտերից երկուսը անցկացվել են ընդլայնված ձևաչփով, որոնց մասնակցելու հրավեր են ստացել ֆակուլտետի բոլոր դասախոսները: Այս ձևաչփավ թնարկվել են ընդհանուր ֆակուլտետին առնչվող հարցերը և կարիքները և տրվել են համապատասխան լուծումներ, կայացվել են որոշումներ:</li></ul>

## II. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

<p>Ֆակուլտետի կառավարման համակարգն ապահովում է կանոնակարգված գործընթաց և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսներ: Ֆակուլտետը հաշվետու տարում դասախոսներին և ուսանողներին իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորություն է ընձեռել:</p>
<p>Վերլուծել հաշվետու տարում ֆակուլտետի կազմակերպական կառուցվածքի արդյունավետությունը:</p> <p>Ֆակուլտետի մեջ ներառված են չորս մասնագիտական ամբիոններ՝ Հայոց պատմության, Համաշխարհային պատմության և Նրա դասավանդման մեթոդիկայի, Իրավագիտության և Նրա դասավանդման մեթոդիկայի, Քաղաքագիտության և իրավունքի պատմության: Ֆակուլտետի չորս ամբիոններում աշխատում են 45 մասնագետներ, որից հիմնական՝ 36</p>

դասախոս և համատեղության կարգով՝ 9 դասախոս: Ֆակուլտետի վարչական աշխատանքները համակարգվում են դեկանատի կողմից: Ֆակուլտետն ընդհանուր առմամբ ունի անհրաժեշտ մարդկային և նյութական ռեսուրսները արդյունավետ ուսումնական գործընթաց կազմակերպելու ուղղությամբ:

Հաշվետու տարում ֆակուլտետի կառավարումն իրականացվել է ՀՀ օրենսդրության, Համալսարանի կանոնադրության և ֆակուլտետի կանոնադրության համաձայն:

Հաշվետու տարում ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանին համաձայն տեղի է ունեցել 9 նիստ, որի ընթացքում քննարկվել են օրակարգային և ընթացիկ հարցեր, կայացվել են համապատասխան որոշումներ /Տե՛ս ֆակուլտետի խորհրդի նիստերի արձանագրություններ/:

Ֆակուլտետի խորհուրդը ընթացիկ տարում կազմված է եղել 30 անդամներից, որտեղ բացի ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները ընդգրկված են եղել ուսանողներ, որոնք կազմում են խորհրդի անդամների ընդհանուր թվի 25 տոկոսը:

Ընթացիկ տարում ֆակուլտետի խորհրդում ընգրկված են եղել ութ ուսանողներ, այդ թվում ֆակուլտետի ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահները, որը ֆակուլտետի ուսանողությանը ևս հնարավորություն է ընձեռել մասնակցելու ֆակուլտետի կառավարման և որոշումների կայացման աշխատանքներին:

Ֆակուլտետի ամբիոնների ներկայացուցիչների համամասնական ներկայացվածությունը ֆակուլտետի խորհրդի աշխատանքներին հնարավորություն է տվել դասախոսական կազմին մասնակցել ֆակուլտետի որոշումների կայացման գործընթացին:

Հաշվետու տարվա ընթացքում կազմակերպվել է նաև ընդլայնված կազմով խորհրդի նիստ, որին մասնակցելու հրավեր են ստացել ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի բոլոր ներկայացուցիչներին:

Պարբերաբար կազմակերպվել են նաև դեկանատի նիստեր, որտեղ քննարկվել են ընթացիկ հարցեր և կայացվել որոշումներ:

Ֆակուլտետը հաշվետու տարում իր նպատակներին համապատասխան մշակել և իրականացրել է պլանավորում, մշտադիտարկել իր մեխանիզմներով:

Վերլուծել պլանավորման և վերջիններիս իրականացման արդյունավետությունը: Ինչքանով է այն նպաստում ֆակուլտետի նպատակների, խնդիրների /առաքելության/ արդյունավետ իրականացմանը:

Հաշվետու տարում ֆակուլտետում աշխատանքների պլանավորումն իրականացվել է ուսումնական պլանների, ֆակուլտետի խորհրդի աշխատանքային ծրագրի և ֆակուլտետի ռազմավարության հիման վրա նախատեսված առաջնահերթություններով:

Ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների կողմից կատարվել են ընթացիկ տարվա գործունեության մշտադիտարկում:

Ամբիոնների վարիչների կողմից նախատեսված ծանրաբեռնվածություն համապատասխան իրականացվել է դասալսումներ: Արձանագրվել են առկա խնդիրը, որոնք քննարկվել են ամբիոնի նիստերում, տրվել են առանձին հանձնարարականներ:

Ամբիոնների կողմից իրականացվել է նաև մշտադիտարկում googleclassroom հարթակում՝ համաձայն ռեկտորի համապատասխան հրամանի:

### III. ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ֆակուլտետի մասնագիտությունների կրթական ծրագրերը և դրանց մշտադիտարկման բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները որքանով են համապատասխանում

մասնագիտական որակավորմանը՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Վերլուծել ՄԿԾ-ների բարելավման ուղղությամբ տարված աշխատանքները, նշել ուսումնառության ակնկալվող արդյունքների համահունչ լինելը և համադրելիությունը մասնագիտական որակավորմանը և Որակավորումների ազգային շրջանակին:

2015-2016 ուստարում ֆակուլտետում սկսվեցին աշխատանքներ նոր ուսումնական պլանների կազմելու ուղղությամբ: 2016-2017 ուստարում ֆակուլտետում բացվեց նոր բաժին՝ *Մանկավարժության բակալավր /հասարակագիտություն/ 011401.08.6* և *„Մանկավարժության մագիստրոս /հասարակագիտություն/ 011401.08.7: Ինչպես նոր բացված մասնագիտության համար, այնպես էլ ֆակուլտետում գործող Պատմություն մասնագիտության համար կազմվել են նոր ուսումնական պլաններ, որոնք վերահաստատվել են ֆակուլտետի խորհրդում 2018թ. ապրիլի 19-ի նիստով (թիվ 6 արձանագրություն): 2016-2017 ուստարում բակալավրիատում Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտացման ընդունելություն տեղի չի ունեցել: Այս մասնագիտացման ուսումնառությունը կատարվում է 2012թ. ֆակուլտետի խորհրդի կողմից ընդունված ուսումնական պլաններով: 2018-2019 ուստարում ֆակուլտետը առկա համակարգում կունենա վերջին շրջանավարտները, իսկ հեռակա բաժնում՝ 2019-2020 ուստարում:*

*Մասնագիտական կրթական ծրագրերը ստեղծելիս հաշվի են առնվել մի շարք հանգամանքներ՝*

- 1. որքանով են համադրելի Որակավորումների ազգային շրջանակին*
- 2. որքանով էլքային արդյունքները համադրելի կլինեն մասնագիտական որակավորմանը*
- 3. որքանով են մասնագիտական ծրագրերում առկա ուսումնական պլաններն իրենց բովանդակությամբ արտացոլում դպրոցական ծրագրերը:*

*Ծրագրի ավարտին ուսանողը կկարողանա ներդնել ստացած գիտելիքները և հմտությունները գործնական և տեսական խնդիրների լուծման ժամանակ, ձեռք կրերի բարձր մակարդակի մասնագիտական գիտելիքներ, և դրանք կրթության ոլորտում կիրառելու հմտություններ և կարողություններ, ինչպես նաև բարոյական արժեքներ:*

Հաշվետու տարում ֆակուլտետը կատարել է մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրություն, մշակել մոտեցումներ և քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Վերլուծել ուսումնառության արդյունքները և նրանց համապատասխան դասավանդման և ուսումնառության մոտեցումներն ու մեթոդները, դասավանդման և ուսումնառության մոտեցումների և մեթոդների պարբերաբար արդիականացման ուսումնասիրությունները, քննարկումները, դասավանդման նյութերի և ռեսուրսների արդիականացման շուրջ կատարված աշխատանքները, ՄԿԾ-ում նշված դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

*Ուսուցումն իրականացվում է խմբային և հոսքային ձևաչափերով, իսկ սեմինար, գործնական, հետազոտական աշխատանքները և պրակտիկան ներառել են ձևավորված փոքրաթիվ խմբեր: Դասավանդման մեթոդները խրախուսում են ուսանողակենտրոն մոտեցում ուսուցման բոլոր փուլերում՝ խրախուսելով ուսանողի անհատական զարգացումը, մասնագիտական կարողությունների համաչափ աճը, մասնագիտական տեղեկատվության ձեռքբերման հարցում վերջինիս ինքնուրույնությունը, ինչպես նաև անհատական վերլուծական ունակությունները և քննադատական մտածողությունը: Ուսուցման և դասավանդման մոտեցումներն ապահովում են գիտելիքների աստիճանական*

*ավանդում՝ ըստ բարոյության, ինչպես նաև հմտությունների և կարողությունների անընդմեջ զարգացում՝ ըստ մասնագիտական կայացման հիմնական պահանջների:*

Դասավանդումն իր մեջ ներառում է դասախոսություններ, սեմինարներ, գործնական /անհատական/ պարապմունքներ, աջակցվող ինքուրույն ուսում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ, խորհրդատվություն և գործնական դասընթացներ:

Դասախոսություններ – ընդլայնված և համահունչ փաստերի հաջորդականության ներկայացման հնարավորություն,

Սեմինարներ – խմբային և անհատական ստեղծագործականի, քննարկումների և անդադարի թողարկում, քննադատական մտածողության զարգացում,

Գործնական պարապմունքներ – փորձարարության և թեմայի, փաստաթղթերի և նյութերի վերլուծության և քննարկման հնարավորություն,

Աջակցվող ինքնուրույն ուսում՝ ընթացիկ նյութերի օգտագործմամբ – Անհատական հետազոտության և զարգացման աջակցում,

Անհատական խորհրդատվություն – Ինքնուրույն ուսման ավելի ընդլայնված, խոր վերլուծության և աջակցության հնարավորության տրամադրում:

Հաշվետու ուսումնական տարում ուսումնառության մոտեցումներում որակի բարելավման

նպատակով \$ակուլտետի ամբիոնների կողմից իրականացվել են դասալսումներ, որոնց իրականացման մասին որոշումներն ամրագրված են ամբիոնների նիստերի

արձանագրություններում: Միաժամանակ դասալսումների մասին կարիքները, դիտողությունները արձանագրված են ամբիոնների վարիչների և դասալսումն իրականացնող ամբիոնների

դասախոսների կողմից:

Ուսանողների գնահատման համակարգը \$ակուլտետում, գնահատման բաղադրիչները և ակադեմիական ազնվությունը հաշվետու տարում:

Վերլուծել \$ակուլտետում ուսումնառության արդյունքներին համապատասխան \$ակուլտետում/ամբիոններում սահմանված գնահատման մեթոդներն ու չափանիշները, ակադեմիական ազնվություն ապահովող միջոցառումները, գնահատման մոտեցումների առաջավոր փորձի համեմատական վերլուծությունները, ուսումնառողների գնահատման մոտեցումների վերանայումները և ուսանողների գնահատման ու գրագողության դեմ իրականացվող պայքարի քայլերի արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/:

*\$ակուլտետում մասնագիտությունների կրթական ծրագրերի շրջանակներում կիրառվող գնահատման մեթոդաբանությունը հիմնվում է ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների օբյեկտիվության և չափելիության վրա՝ փաստող, ուղղորդող և խրախուսող գործառնություններով: Գնահատվում են ուսանողի՝*

*ա. գիտելիքը,*

*բ. ունակություններն ու կարողությունները,*

*գ. ինքնուրույնությունը և ակտիվությունը:*

*Ուսանողի անհատական մասնագիտական աճը օբյեկտիվ դիտարկելու նպատակով գնահատման կարգը դիտարկում է նախնական (սկզբնական) վիճակը և վերջնական (ելքային) արդյունքը:*

*Դասընթացների գնահատման մեթոդներից են՝*

*1. տեսական դասընթացների պարագայում՝*

*գրավոր թեստային, ստուգողական աշխատանքներ, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, հաշվետվություններ, էսսեներ (խտհազոտություններ) և բանավոր և գրավոր ներկայացումներ (պրեզենտացիաներ),*

*2. գործնական դասընթացների պարագայում՝*

*գրավոր թեստային, միջանկյալ գրավոր և/կամ բանավոր քննություն, ինքնուրույն նախագծեր, բանավոր հարցումներ և հարցազրույցներ, էսսեներ և բանավոր և գրավոր*

*ներկայացումներ (պրեզենտացիաներ),*

*Չետագոտական աշխատանքների (կուրսային աշխատանք, հաշվետվություն, ավարտական թեզ) գնահատումն իրականացվում է առանձին՝ հանձնաժողովի կողմից՝ նախապես սահմանված գնահատման կարգի համաձայն:*

*Գնահատման ընթացքում կիրառվում է տառային և վարկանիշային գնահատում (100 միավոր), համաձայն յուրաքանչյուր առարկայի գնահատման համար ընտրված բաղադրիչների:*

Ֆակուլտետում գնահատումն իրականացվում է 100 բալանի համակարգով: 2017-2018 ուս. տարվա ուսանողների գիտելիքների գնահատումը կազմակերպվել է ուսումնական գործընթացների հարցերով պրոռեկտորի 20.10.2017թ. շրջաբերականով նախատեսված ձևաչափով, ըստ որի յուրաքանչյուր առարկայի ընդհանուր գնահատման բաղադրիչները տրոհվում են հետևյալ կերպ.

1. Ընթացիկ ստուգմամբ ավարտվող դասընթացներ.

- Միջանկյալ ստուգում 1-30 տոկոս
- Միջանկյալ ստուգում 2-30 տոկոս
- Հաճախում-5 տոկոս
- Ընթացիկ ստուգում-35 տոկոս

2. Ամփոփիչ ստուգմամբ ավարտվող դասընթացներ.

- Միջանկյալ ստուգում 1-30 տոկոս
- Միջանկյալ ստուգում 2-30 տոկոս
- Հաճախում-5 տոկոս
- Ընթացիկ ստուգում-15 տոկոս
- Ամփոփիչ ստուգում-20 տոկոս

Հաշվետու տարում առկա և հեռակ համակարգ ընդունված առաջին կուրսեցիների համար ըստ ուսումնական գործընթացների գծով պրոռեկտորի 29.11.2018թ. շրջաբերականի ներդրվել է գնահատման հետևյալ նոր բաղադրիչներով.

**ԱՌԿԱ**

**Առարկաներ, որոնք ավարտվում են 2 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ /քննությանմբ/**

	ըկա ակալավրիատ	ըկա ագիստրատուրա
աճախում/մասնակցություն	5%	5%
ըթացիկ (լսարանային և եկտրոնային) անձնարարականների կատարման տուգում	15%	15%
իջանկյալ ստուգում 1	25%	25%



իջանկյալ ստուգում 2	25%	25%
ամփոփիչ ստուգում	30%	30%

**Առարկաներ, որոնք ավարտվում են 2 միջանկյալ ստուգմամբ՝ առանց ամփոփիչ ստուգման/քննության/**

	նկա ակալավրիատ	նկա ագիստրատուրա
աճախում/մասնակցություն	5%	5%
սթացիկ (լսարանային և եկտրոնային) անձնարարականների կատարման թուղում	15%	15%
իջանկյալ ստուգում 1	40%	40%
իջանկյալ ստուգում 2	40%	40%

**Առարկաներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ/քննությամբ/**

	նկա ակալավրիատ	նկա ագիստրատուրա
աճախում/մասնակցություն	5%	5%
սթացիկ (լսարանային և եկտրոնային) անձնարարականների կատարման թուղում	15%	15%
իջանկյալ ստուգում	40%	40%
ամփոփիչ ստուգում	40%	40%

**Առարկաներ, որոնք ավարտվում են ստուգարքային ամփոփմամբ առանց միջանկյալների**

	նկա ակալավրիատ	նկա ագիստրատուրա

աճախում /մասնակցություն	5%	5%
ընթացիկ (լսարանային և եկտրոնային) անձնարարականների կատարման թուղթում	45%	45%
ստուգարքային աշխատանքի արկայացում	50%	50 %

**ՋԵՌԱԿԱ**

**Առարկաներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ և ամփոփիչ ստուգմամբ /քննությամբ/**

	Ջեռակա ակալավրիատ	Ջեռակա մագիստրատուրա
աճախում /մասնակցություն	5%	5%
ընթացիկ խորհրդատվական սրբաթերին տրված ընթացիկ անձնարարականների կատարման թուղթում	25%	25%
ընթացիկ միջանկյալ աշխատանքի թուղթում	25%	25%
ներես բանավոր ամփոփիչ զրափակիչ ստուգում	45%	45%

**Առարկաներ, որոնք ավարտվում են 1 միջանկյալ ստուգմամբ՝ առանց ամփոփիչ ստուգման /քննության/**

	Ջեռակա ակալավրիատ	Ջեռակա մագիստրատուրա
աճախում /մասնակցություն	5%	5%

ռցանց խորհրդատվական սբաթներին տրված ընթացիկ անձնարարականների կա-տար-ման թուղում	45%	45%
ռցանց միջանկյալ աշխատանքի թուղում	50%	50%

**Առարկաներ, որոնք ավարտվում են ստուգարքային ամփոփմամբ առանց միջանկյալների**

	Եռակա ակալավրիատ	Յեռակա մագիստրատուրա
աճախում /մասնակցություն	5%	5%
ռցանց խորհրդատվական սբաթներին տրված ընթացիկ անձնարարականների կատարման թուղում	45%	45%
ստուգարքային աշխատանքի քրկայացում	50%	50%

2018 թվականի նոյեմբերի 21-ի համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ ուսանողների գնահատման բազմագործոնային համակարգում բաղադրիչներից/գործոններից յուրաքանչյուրը գնահատվում է 100 միավոր, համաձայն առարկայի ընդհանուր գնահատման մեջ նրա տեսակարար կշռի, որը չի կարող կինել 5 տոկոսից ցածր և 45 տոկոսից բարձր: Նույն որոշմամբ հաճախման բաղադրիչը սահմանվել է 5 տոկոս՝ նախկին 10-ի փոխարեն, իսկ մնացած 5 տոկոսը նախատեսվում է հատկացնել ընթացիկ աշխատանքին կամ ինքնուրույն աշխատանքին:

Ներկայում ֆակուլտետի համապատասխան ամբիոններում աշխատանքներ են տարվում գիտական խորհրդի վերընշված որոշման համաձայնս դասավանդվող դասընթացների առարկայական նկարագրերի փոփոխության ուղղությամբ:

Ֆակուլտետի աշխատանքները մասնագիտությունների կրթական ծրագրերը նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին համապատասխանեցնելու, ուսանողների և դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը նպաստելու ուղղությամբ:

Մասնագիտության կրթական ծրագրի տարանջատումը տեսական, գործնական բաղադրիչների: Ֆակուլտետի ներսում կամ տեղական ու միջազգային այլ հաստատությունների տվյալ կամ այլ մասնագիտության կրթական ծրագրերին համահունչ աշխատանքներ: Ուսանողների և դասավանդող անձնակազմի շարժունության հնարավորություններն ապահովող և պարզաբանող մոտեցումներ:

Վերլուծել և հիմնավորել մասնագիտության կրթական ծրագրերի բովանդակային հուսալիությունը, ֆակուլտետի և այլ հաստատությունների համապատասխան մասնագիտական ծրագրերի հետ համադրելիությունը, ինչպես նաև այդ մոտեցումների արդյունավետությունը /կատարել համառոտ մեջբերումներ համապատասխան հիմքերից/: Ինչքանով է այն նպաստում ուսումնառողների ու դասավանդողների շարժունությանը:

Ֆակուլտետում դեկանի 10.10.2017թ. հրամանով՝ ստեղծվել է մասնագիտական խումբ, որը զբաղվում է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշակմամբ, ինչպես նաև աշխատանքներ է տանում համապատասխանեցնելու այլ բուհերի մասնագիտական կրթական ծրագրերին: Աշխատանքային խմբում ընդգրկված են դեկանը, դեկանի տեղակալները, ամբիոնների վարիչները, ամբիոնների որակի ապահովման պատասխանատուները, ֆակուլտետի պրակտիկայի ղեկավարը, թիվ 57 հիմնական դպրոցի ուսուցիչ՝ ուսումնական գծով փոխտնօրենը և ուսանողական խորհրդի ներկայացուցիչները: Կազմված մասնագիտական կրթական ծրագրերը ուսումնասիրվել և համապատասխանեցվել են ֆակուլտետի որդեգրած ռազմավարությանը և հաստատվել 2018թ. հունիսի 29-ի ֆակուլտետի խորհրդի կողմից (թիվ 9 արձանագրություն):

Ըստ այդմ՝

Պատմություն և հասարակագիտություն մասնագիտության բակալավրիատի կրթական ծրագրերը բաղկացած են հինգ կրթամասից՝

Բակալավրի ծրագիրը բաղկացած է 5 հիմնական կրթամասերից՝

ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացներ **(38 կրեդիտ**

**աշխատածավալով) հեռակա համակարգում (34 կրեդիտ),** ընդհանուր

մաթեմատիկական և բնագիտական դասընթացներ **(8 կրեդիտ աշխատածավալով),**

մանկավարժական և հոգեբանական դասընթացներ **(16 կրեդիտ աշխատածավալով)**

ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացներ **(148 կրեդիտ**

**աշխատածավալով) ինչպես նաև այլ կրթաբլոկեր (30 կրեդիտ աշխատածավալով)**

**հեռակա համակարգում (34 կրեդիտ):**

**1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական կրթամաս (38 կրեդիտ**

**աշխատածավալով) հեռակա ուսուցման համակարգում (34 կրեդիտ)՝**

**Ֆիզիկական դաստիարակություն առարկան հեռակա համակարգում չեն**

**անցնում**

Պարտադիր դասընթացներ **(34 կրեդիտ)**

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ /մոդուլ/, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը:

Կամընտրական դասընթացներ **(4 կրեդիտ)**

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ/մոդուլ/:

**2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական կրթամաս (8 կրեդիտ**

**աշխատածավալով)**

Պարտադիր դասընթացներ **(8 կրեդիտ)**

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ /մոդուլ/, որոնք նպատակաուղղված են ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական գիտելիքների մասնագիտական հենքի ձևավորմանը:

**3. Մանկավարժական հոգեբանական կրթամաս ( 16 կրեդիտ)**

Ապահովում են մանկավարժ-հոգեբանական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

Պարտադիր դասընթացներ (14 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարության մանկավարժահոգեբանական պարտադիր դասընթացներ / մոդուլ/,:

Կամընտրական դասընթացներ (2 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարության ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ կամընտրական մանկավարժահոգեբանական դասընթացներ/ մոդուլ/:

**4. Ընդհանուր մասնագիտական կրթամաս ( 148 կրեդիտ)**

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

Պարտադիր դասընթացներ (142 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական պարտադիր դասընթացներ / մոդուլ/,:

Կամընտրական դասընթացներ (6 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ կամընտրական մասնագիտական դասընթացներ/ մոդուլ/:

**5. Կրթական այլ մոդուլներ ( 30 կրեդիտ)**

Կուրսային աշխատանք ( 4 կրեդիտ)

Ծրագրի այս հատվածում նախատեսվում է 2-ական կրեդիտ աշխատածավալով 2 կուրսային աշխատանքի կատարում:

Մանկավարժական պրակտիկա (18 կրեդիտ)

Նախատեսում է դասավանդում դպրոցում, որի նպատակն է բալավավրերի մանկավարժական փորձի ձեռքբերումը:

Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստում ( 2 կրեդիտ) հեռակա ուսուցում` (4 կրեդիտ)

Ամփոփիչ ատեստավորման պաշտպանություն ( 6 կրեդիտ) հեռակա ուսուցում` (8 կրեդիտ)

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը ըստ կրթական ծրագրի վերջնադրյունների:

Հեռակա ուսուցումը առկա ուսուցման հայելային պատկերն է և բոլոր կրթամասերին նախատեսված մոդուլները պահպանված են նույնությամբ` բացառությամբ ֆիզիկական դաստիարակության, քանի որ այդ առարկան հեռակա ուսուցման ժամանակ չեն անցնում: Առկա ուսուցման համակարգում ֆիզիկական դաստիարակությանը նախատեսված 4 կրեդիտ - 120 ժամը փոխանցվել է հեռակա համակարգի Ամփոփիչ ատեստավորման նախապատրաստմանը` դառնալով 4 կրեդիտ և Ամփոփիչ ատեստավորման պաշտպանությանը` դառնալով 6 կրեդիտ:

Պատմություն, Հասարակագիտություն և Իրավագիտություն /մանկավարժություն/ մագիստրատուրայի ծրագիրը բաղկացած է 3 հիմնական կրթամասերից`

**ընդհանուր գիտական եվ հոգեբանամանկավարժական կրթամաս (27 կրեդիտ աշխատածավալով), ընդհանուր եվ հատուկ մասնագիտական կրթամաս (46 կրեդիտ աշխատածավալով), հետազոտական կրթամաս (47 կրեդիտ աշխատածավալով)**

**1. Ընդհանուր գիտական եվ հոգեբանամանկավարժական կրթամաս (27 կրեդիտ**

**աշխատածավալով)**

**Պարտադիր դասընթացներ (25 կրեդիտ)**

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ դասընթացներ /մոդուլ/, որոնք նպատակաուղղված են համալսարանական կրթության ընդհանուր տեսական հենքի ձևավորմանը: Կամընտրական դասընթացներ (2 կրեդիտ)

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ դասընթացներ/ մոդուլ/:

**2. Ընդհանուր եվ հատուկ մասնագիտական կրթամաս (46 կրեդիտ աշխատածավալով)**

Ապահովում են մասնագիտական ոլորտի հիմնախնդիրների պատշաճ ընկալումը:

**Պարտադիր դասընթացներ (26 կրեդիտ)**

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ մասնագիտական պարտադիր դասընթացներ / մոդուլ/

**Կամընտրական դասընթացներ (20 կրեդիտ)**

Ներառում են ամրագրված բովանդակային կառուցվածքով և հաշվարկված կրեդիտատարությամբ ուսանողի կողմից ընտրելու հնարավորությամբ կամընտրական մասնագիտական դասընթացներ/ մոդուլ/:

**3. Հետազոտական կրթամաս (47 կրեդիտ աշխատածավալով)**

**Հետազոտական աշխատանք կիսամյակում (14 կրեդիտ աշխատածավալով)**

Ծրագրի այս հատվածում նախատեսվում է մագիստրոսական հետազոտական աշխատանքի կատարում:

**Հետազոտական պրակտիկա (8 կրեդիտ աշխատածավալով)**

Նախատեսում է հետազոտական աշխատանք, որի նպատակն է մագիստրոսական թեզի շրջանակում իրականացնել գիտական հետազոտություն:

**Մանկավարժահետազոտական պրակտիկա (6 կրեդիտ աշխատածավալով)**

Նախատեսում է դասավանդում դպրոցում և բուհում, որի նպատակն է բարելավել մանկավարժական փորձի ձեռքբերումը:

**Մագիստրոսական ատենախոսության պատրաստում (17 կրեդիտ աշխատածավալով)**

**Մագիստրոսական ատենախոսության պաշտպանություն (4 կրեդիտ աշխատածավալով)**

Կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որի նպատակն է տեսական և գործնական մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների:

Մագիստրատուրայում հեռակա համակարգում ուսուցումը իրականացվում է Հասարակագիտություն և Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտացմամբ, որոնց մասնագիտական կրթական ծրագրերի ունեն հայելային արտացոլումը առկա համակարգի և բոլոր մոդուլներն ու կրեդիտները համապատասխանում են:

Ֆակուլտետում գործող մասնագիտությունները պատրաստում են կադրեր հանրակրթության, գիտակակրթական և այլ ոլորտների համար: Ֆակուլտետում գործող Հասարակագիտություն մասնագիտացումն իր բովանդակությամբ եզակի է, քանի որ միակ ուսումնական հաստատությունն է, որը պատրաստում է հանրակրթության ոլորտի համար Հասարակագիտության ուսուցիչներ: Հասարակագիտության մասնագիտացման

առանձնահատկությունից ելնելով՝ մասնագիտական կրթական ծրագիրը համեմատել ենք Մոսկվայի մանկավարժական պետական համալսարանի պատմության և քաղաքականության ինստիտուտի պատմության ֆակուլտետում գործող Պատմություն և հասարակագիտության մասնագիտացման հետ: Ուսուցումը այդտեղ հինգ տարի է և միաժամանակ ուսումնառությունը կատարվում է երկու մասնագիտացման համար:

**Ընդհանուր եվ հատուկ մասնագիտական կրթամաս մոդուլում, որը մեզ մոտ կազմում է 46 կրեդիտ (1380 ժամ), Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի համապատասխան մասնագիտացման դեպքում կազմում է 6628 ժամ, որն իր մեջ ներառում է դասախոսություն, գործնական, ստուգողական աշխատանքների բաղադրիչները:** Համեմատելով եկել ենք հետևյալ եզրահանգման, որ մասնագիտական մոդուլում ուսուցանում են այն նույն առարկաները, ինչ մեզ մոտ պլանով նախատեսված են, սակայն լսարանային ժամերը գերազանցում են մեզ մոտ հատկացված ժամերից: Մոսկվայի մանկավարժական համալսարանում ապագա ուսուցիչներին բավական մեծ տեղ է հատկացվում պրակտիկաներին: Պրակտիկաները մեզ մոտ միայն մանկավարժական են, իսկ ահա տվյալ բուհում նրանք ուսումնական են, մանկավարժական, ջոկատավարական և նախադիպլոմային պաշտպանության: Նույնը կարող ենք ասել մոսկովյան բուհում Պատմություն և իրավունք մասնագիտացման համար:

Պատմություն մասնագիտացման ծրագրերը համեմատել ենք ԵՊՀ պատմության ֆակուլտետի պատմություն մասնագիտացման, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի պատմության մասնագիտացման, Հունգարիայի Պիտեր Պազման կաթոլիկ համալսարանի պատմության մասնագիտացման հետ: Ի տարբերություն Երևանի պետական և Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանների, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի ուսումնական պլանը մանկավարժական մոդուլներ է պարունակում և համահունչ է մեր ֆակուլտետի մասնագիտացման ուսումնական պլանին: Սակայն պետք է նշել, որ ԵՊՀ-ում, ՄՊՄ-ում և Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանում խորացված ուսուցանվում են հին լեզուներ, որոնք նպաստում են պատմության մասնագետի կայացմանը, կլինի դա դպրոցում դասավանդման, թե գիտական աշխատանք կատարելու համար:

2016 թվականին ՀՊՄՀ և Պիտեր Պազմանի կաթոլիկ համալսարանի միջև կնքված պայմանագրի շրջանակներում 2018 թվականին երկու համալսարանների միջև ստորագրվեցին ևս յոթ հավելվածներ, որոնցից մեկը վերաբերում էր պատմության մասնագիտության գծով համատեղ մագիստրոսական ծրագրի հիմնմանը, որը նախատեսում էր սույն ծրագիրն ավարտած ուսանողներին շնորհել կրկնակի դիպլոմներ՝ ՀՊՄՀ և ՊՊԿՀ: Համատեղ կրթական ծրագիրը նախատեսում է համատեղ ուսումնական պլանների ստեղծում: Հիմք ընդունելով պահանջվող չափանիշները և ստորագրված պայմանագրերը հաշվետու տարվա ընթացքում ՊՊԿՀ Հայագիտության ամբիոնի հետ մշակվել են համատեղ ուսումնական պլաններ և այլ անհրաժեշտ փաստաթղթեր 2019-2020 ուսումնական տարում ընդունելություն կազմակերպելու ուղղությամբ:

Հմատեղ կրթական ծրագրի իրագործում կարող է կարևոր ազդեցություն ունենալ ֆակուլտետի միջազգայնացմանը: Նախ բացի ուսանողների շարժունակության ապահովմանը ծրագիրը լուրջ խթան կարող է հանդիսանալ պրոֆեսորադասախոսական կազմի շարժունակության մեծացմանը:

Ֆակուլտետում հաշվետու տարում իրականացված մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման աշխատանքները:

Շահակիցների կարիքները հաշվի առնող՝ ուսումնառության ակնկալվող արդյունքների վերանայման փաստեր: Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրության

մեթոդները: Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման մեխանիզմները:

Վերլուծել ՄԿԾ-ի մշտադիտարկման, գնահատման և վերանայման մեխանիզմները և դրանց արդյունավետությունը, դրանց հիման վրա իրականացրած բարելավումները:

Հաշվետու տարում \$ակուլտետի ամբիոնների կողմից կատարվել են համեմատություններ դպրոցական ծրագրերի հետ: Պետք է նկատել, որ Հասարակագիտության մասնագիտացման կրթական ծրագիրը գրեթե ամբողջովին համապատասխանում է հանրակրթության Հասարակագիտություն առարկայական ծրագրերին: Հասարակագիտության մասնագիտական կրթական ծրագրի մեջ առանձնահատուկ տեղ է հատկացվել պատմական դիսցիպլիններին: Հասարակագիտություն առարկայի հանրակրթական ծրագրերում պատմության առանձին բլոկ գոյություն չունի, քանի որ թե՛ հիմնական, թե՛ ավագ դպրոցներում պատմությունը ուսումնասիրվում է զուգահեռ: Պետք է նկատել, որ Հասարակագիտության մասնագետը ամբողջովին մասնագիտությունը յուրացնելու համար պետք է նաև տեղյակ լինի պատմական դիսցիպլիններից: Դրա վառ ապացույցն է նաև մեր կողմից կատարված ուսումնական պլանների համեմատությունը՝ մասնավորապես, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի նույն մասնագիտացման հետ: Իրենց կրթական ծրագրով Հասարակագիտության մասնագետը պետք է լինի նաև պատմության մասնագետ:

Պատմություն մասնագիտական կրթական ծրագրերը պարբերաբար համեմատվում են դպրոցական ծրագրերի հետ և հնարավորինս մոտեցվում են ՀՀ ԿԳՆ հանրակրթության ծրագրերին: \$ակուլտետում նաև ուսուցանվում են պատմական լրացուցիչ դիսցիպլիններ, որոնք օժանդակող ու ամրապնդող դեր ունեն կրթական ծրագրի վերջնարդյունքին հասնելու համար: Հայոց պատմության ամբիոնում դասավանդվում են առարկաներ, որոնք ամբողջական չեն արտացոլվում դպրոցական ծրագրերում, սակայն առանց դրանց հնարավոր չէ պատմական գիտելիքներն ամբողջովին ձեռք բերել և նյութացնել: Միաժամանակ առաջարկվում է, որպեսզի հետագայում դպրոցական ծրագրերում ներառվեն այնպիսի բաժիններ, որոնք ամբողջովին կարտացոլեն Պատմության մասնագիտացման կրթական ծրագրի վերնարդյունքները: Որպես օրինակ կարող ենք բերել Ազգագրություն առարկան: Դպրոցական ծրագրերում որևէ կերպ պատմական այդ դիսցիպլինի տարրերը ներառված չեն: Առաջարկվում է հետագյում դպրոցական դասագրքերում մշակույթի բաժիններում ավելացնել ազգագրական նյութ պարունակող թեմաներ: Պատմություն մասնագիտացման կրթական ծրագրում առաջարկվում է պարտադիր մտցնել Գրաբար առարկան, որը կնպաստի ուսանողների մոտ հին և միջնադարյան շրջանի վերաբերյալ գիտելիքների ավելի կայուն ամրապնդում: Ուսանողները հնարավորություն կունենան հետագյում ինքուրույն, վերլուծական ածխատանքներ կատարելիս օգտվեն անմիջապես բնագիր աղբյուրներից:

Իրավագիտություն /մանկավարժություն/ մասնագիտական կրթական ծրագիրը վերաբերում է միայն մագիստրատուրային, քանի որ բակալավրիատում ընդունելություն 2016-2017 ուստարուս սկսած տեղի չի ունեցել:

Արտաքին և ներքին շահակիցների կարիքների ուսումնասիրությունը կատարվել է հիմնականում համեմատման և համադրման մեթոդներով: Մեթոդների ուսումնասիրմանը մասնակցել ինչպես ամբիոնների որակի պատասխանատուները, ինչպես նաև թիվ 57 դպրոցի փոխտնօրեն, պատմության ուսուցիչ Մերի Բաբայանը, համատեղության կարգով ՀՊՄՀ հենակետային վարժարանում աշխատող \$ակուլտետի դասախոսներ Սամվել Պողոսյանը, Արմինե Եփրիկյանը և Հայկ Գրիգորյանը: Համեմատվել են \$ակուլտետում գործող ուսումնական պլանները և հանրակրթական ծրագրերը: Վերլուծությունների արդյունքում հանգել են հետևյալ եզրակացությանը, որ հիմնականում համապատասխանում են մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքները դպրոցական առարկայական ծրագրերին:

